ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 17 հուլիսի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Գյուլումյանի
Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով Ռուզաննա Տեր-Վարդանյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Ռուզաննա Տեր-Վարդանյանը 2019 թվականի հուլիսի 8-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ Սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը համարել ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին, 52-րդ հոդվածին հակասող՝ հաշվի առնելով նաև հոդվածի այդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները»:

2. Դիմողը գտնում է, որ «Պաշտպանն իր «անկախության երաշխիքի» անվան տակ խախտում է նաև երեխայի շահերի առաջնահերթ ուշադրության արժանացման

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի 37-րդ հոդվածի 2-րդ մասի իմպերատիվ պահանջները՝ պատճառաբանելով, որ իր անգործությունն անբողոքարկելի է»:

Դիմողը պատճառաբանում է, որ «եթե Պաշտպանի անգործությունը հնարավոր չէ բողոքարկել», ուրեմն «անձը զրկվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունից ...»:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով, քանի որ դիմումում բացակայում են Սահմանադրության 37 և 52-րդ հոդվածներում ամրագրված սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման և վիճարկվող նորմերի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի մասին հիմնավորումները:

Այսպես, բացակայում է պատճառահետևանքային կապը Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ իրեն վերաբերող հարցերում իր շահերն առաջնահերթ ուշադրության արժանանալու՝ երեխայի իրավունքի և Մարդու իրավունքների պաշտպանի որոշումների անբողոքարկելիության միջև:

Սահմանադրության 52-րդ հոդվածում ամրագրված՝ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունքի և Մարդու իրավունքների պաշտպանի որոշումների անբողոքարկելիության միջև նույնպես բացակայում է պատճառահետևանքային կապը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանը դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ որոշում է կայացրել: Դիմումում ներկայացված մյուս փաստարկները ներկայացնում են դիմողի դժգոհությունը Մարդու իրավունքների պաշտպանի ենթադրյալ անգործությունից:

Ինչ վերաբերում է դիմողի այն դիրքորոշմանը, որ Մարդու իրավունքների պաշտպանի որոշումների անբողոքարկելիության պայմաններում իմաստազրկվում է Մարդու իրավունքների պաշտպանին դիմելը, ապա, նախ՝ դիմողը կատարում է վերացական սահմանադրական վերահսկողությանը բնորոշ հարցադրում՝ չհանդիսանալով վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտ, և երկրորդ՝ մարդու իրավունքների պաշտպանության առավել հուսալի և արդյունավետ եղանակը դա-

տական պաշտպանությունն է, և իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության հարցով դիմողը զրկված չէ անմիջականորեն դատարան դիմելու իրավունքից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Ռուզաննա Տեր-Վարդանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

17 հուլիսի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-40